ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ № 5389 ՁԵՌԱԳՐԻ ՊԱՏԱՌԻԿ – ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ

Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի № 5389 ձեռագրի երեք պահպանակներից մեկը հնատիպ գրքի մի էջ է (իր չափերով համապատասխան ձեռագրին, նկ. 1)՝ ամբողջական բանաստեղծությամբ: Ձեռագիրը (30 թերթ, 29x20,5) Խորհրդատետր-Պատարագամատույց է[1]: Համաձայն հիշատակարանների (թթ. 20բ, 28բ)՝ ձեռագիրը գրված է հայոց ՌՃԽԴ. (փրկչական 1695) թվականին Պետրոս գրչի ձեռքով: Ամենայն հավանականությամբ, գրչության վայրը Լիմ անապատն է, թեպետ այս մասին հիշատակարաններից և ոչ մեկում չի նշվում: Լիմ անապատում գրված լինելու ենթադրության համար առաջնորդվում ենք պատառիկ - պահպանակի բանաստեղծությամբ, քանի որ վերջինս գովեստի չափածո խոսք է նվիրված Վանա ծովակի կղզիներից Լիմին և այնտեղ գործող անապատին: Քերթվածի հեղինակն իր անունն անմահացրել է ծայրակապի միջոցով («Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՊԱՆՏՐՄԱՑՈՅ»), իսկ բանաստեղծության վերջում շատ հետաքրքիր ծածկագրի միջոցով հեղինակը տալիս է նաև թվական՝ հավանաբար, բանաստեղծությունը գրելու ժամանակը (տե՛ս վերջին երեք քառատողը. *օր* = 24, *հոբելյանը* = 50, *Բեն* = 2, 24 x 50 + 2 + 551 = 1753)[2]: Ուստի, հիմք ընդունելով բանաստեղծության որոշակի տվյալներ, տարբեր աղբյուրներում փնտրեցինք և փորձեցինք գտնել նմանատիպ մի աշխատություն՝ մտածելով, որ այս բանաստեղծությունը կարող է լինել ամբողջական գործի մի մաս: Քանի որ պատառիկ-պահպանակը տպագիր էր, մեր փնտրտուքների առաջին աղբյուրը եղավ «Հայ գիրքը 1512–1800 թվականներին» աշխատությունը, որտեղ էլ փորձեցինք գտնել բանաստեղծության տվյալներին համապատասխան Խորհրդատետր կամ Պատարագամատույց՝ հիմք ընդունելով գրչության ժամանակահատվածը (10 տարի առաջ և հետո), տեղանունը, բովանդակությունը, սակայն մեր փնտրտուքն ապարդյուն անցավ: Հավանաբար, աշխատությունը կորել է, և միայն այս ամբողջական թերթն է պահպանվել, որը, բարեբախտաբար, չի եզրատվել, և բանաստեղծությունն ամբողջական է:

Բանաստեղծության թերթի դարձերեսին կա «Խաչելության» վիմատիպ պատկեր, որի մեկ այլ օրինակ առկա է ձեռագրի վերջում գտնվող պահպանակին (նկ. 2): Սա նորություն է մեր գրատպության պատմության մեջ:

---

[1] *Նման ձեռագրերը պատարագի բովանդակությունը և մատուցման կարգը պարունակող ծիսամատյաններ են: Կան տարբեր առաքյալների վերագրված Խորհրդատետր - Պատարագամատույցներ: Հայ եկեղեցին ժամանակի ընթացքում հայացրել է դրանցից որոշները, որոնք հայտնի են բարսեղյան, նազիանզյան, ոսկեբերանյան, հռոմեական անուններով: Հայոց այս ծիսամատյանը գլխավորապես կազմված է կապադովկյան հայրերի՝ Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու հեղինակած պատարագամատույցից: Հայերեն Խորհրդատետր - Պատարագամատույց առաջին անգամ տպագրել է Հակոբ Մեղապարտը, 1513-ին, Վենետիկում (տե՛ս Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Երևան, 2002, էջ 445-446):*

[2] *Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Հայկական ծածկագրություն, Երևան, 1978, էջ 41–42:*

Ձեռագիրը հայ մանրանկարչական արվեստի գոհարներից է, ինչի վկայությունն են ոչ միայն 3բ էջը ամբողջությամբ գրված պատարագի տեսարանը, 4ա էջը զարդարող կիսախորանը, ուր Քրիստոսի և տասներկու առաքյալների պատկերներ են՝ իրենց խորհրդանիշերով, 16 մանրանկարները բնագրի մեջ, որոնք պատկերում են ձեռագրի բովանդակությանը համապատասխան տեսարանները (ինչպիսիք են՝ պատարագը, ձեռնադրությունը, ձեռնլվան կամ աղոթք առ Աստված), այլև նրբագեղ զարդագրերը, գրադաշտի շրջանակը, սյուներն իրար միացնող զարդագոտին և մանրանկարների նրբերանգ գունապնակը (սև, կարմիր, կապույտ, ոսկի): Ցավոք, իր յուրատիպ արվեստով առանձնացող այս վարպետի անունը մեզ չի հասել:

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԱՂԱՉԱՓԱԿԱՆ ԲԱՆ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՐԱՇԱԼԻ ԱՆԱՊԱՏՆ ԼԻՄԱՅ,
ԱՍԱՅԵԱԼ Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԸՍՏ ԳՐՈՅ ԱՆՈՒԱՆ ԻՒՐՈՅ.

Օգնեա՛ ինձ Հոգի Սուրբ, Աստուած ճշմարիտ

Ի *ծովակին Վասպուրական,*
Կղզիք բազումք զետեղեալ կան,
Յ*որոց մինն է յոյժ պատուական,*
Որ Լիմ կոչի անուն նորայն:

Ա*ռաքինեաց է մենաստան,*
Ճգնաւորաց մաքուր կայան,
Ր*ամից վերնոց խըրախճարան,*
Եւ Սուրբ Հոգւոյն միշտ օթարան:

Ո*ւնի տաճար զարմանալի,*
Գէորգիոս քաջ զինուորի,
Ի*ատօսատիպ հրափայլի,*
Լեալ ի բոցոյ անկիզելի:

Թ*ըւով սքանչելիքն անթիւ,*
Ոչ ոք կարէ պատմել բանիւ,
Ի *սա թէ ոք դիմէ սըրտիւ,*
Լցեալ լինի հոգւոյն շնորհիւ:

Ի*իրանման առ ի յինքեան,*
Ունի զջուր կենդանութեան,
Ն*ա է երկինք նմանական*
Վ*ասն սրբոց բնակութեան:*

Նկ. 1

Անդ բնակողքն լուսափայլին,
Գեր, քան զաստեղս երկնային,
Ռախացեալ հոգւով բերկրին,
Միշտ լինելով ընդ փեսային:

Դուռն և պարիսպն է ջրեղէն,
Խնամեալ լինի երկնաւորէն,
Աղօթքն, որ անդ ի տաճարէն,
Կանգնի որպէս սիւն լուսեղէն:

Պարտէզ ծաղկեալ ջրապարփակ,
Անվանելի բարձր աշտարակ,
Երկիւղածաց ամուր դրդեակ,
Յախթողաց տայ լուսոյ պրսակ:

Տապանէ նա ապրեցուցիչ,
Ի հեղծմանէ միշտ կեցուցիչ,
Է և Սինայ բարձրացուցիչ,
Ընդ Աստուծոյ միաւորիչ:

Պարապելոցն ի յաշխարհէ,
Յոյժ հրաշալի անապատէ,
Անկեալ 'ւ իւծեալ զհոգին յահէ,
Կազդուրացեալ զօրեղս առնէ:

Նան շնորհաց անօթ կազմէ,
Սրբոց դասուց միաւորէ,
զՏկարն ի քաղցութենէ,
Երկնից հացիւն կերակրէ:

Ռահ է սա երկնից յերկրէ,
Զարժանացեալսն ի վերածէ,
Միշտ կամար լուսոյ իջանէ,
Զբնակիչսն ուրախ առնէ:

Անդ իբր զնշոյլ ցուցանէ,
Ի յերկնային հարսարանէ,
Ցնծութեամբ միշտ թէ ոք անդ է,
Տիւ և գիշեր զԱստուած օրհնէ:

Ուստի հայցեմ, որք զայս առնեն,
Եւ յաշխարհի յաւէտ օգնեն,
Ցիշել անգամ արժան առնեն,
Եւ ի յախտէ զգերիս բուժեն:

Նկ. 2

* * *

Գիշերատիւ միոյ աւուր,
Զթիւ ժամուցն վերառեալ,
Զիւրաքանչիւրն որոշակի,
Յոբելեան իմն համարեալ:

Ի վերայ այսր ամենայնի,
զԲեն զիրն վերաբերեալ,
Որքանութիւն թուականիս,
Ապակարծիք լինի յայտնեալ:

Եւ ի յամսեանն օգոստոսի,
Յեռատասնումն պատահեալ,
Ի Բիւզանդիա քաղաքին,
Եղն իսկ այս տպագրեցեալ: